## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԹԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 3 Ապր. — Նախատօնակին ի Ս. Էջմիածին Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

● Եր. 4 Ապր. — Յիշատակ Տապանակին։ Ս. Պատարագը Մատուցուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Քարոզեց էր Ամ. Մանի և չքնաղագոյն Հոգևոր Հովիւ Հոգշ. Տ. Վրթանէս Արք. Պօլատեան։

Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուած Այլափոխութեան՝ Մեծամասնութեան Նախատօնակին և անոր յաջորդող Տնօրինական գանձերգութեան Նուիրուած Հանդիսութեան Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

— Երեկոյեան, Գերշ. Արքեպիսկոպոսին Նախագահութեամբ Մայր Տաճարին մէջ կատարուած եկեղեցական և Հսկման կարգերուն։

● Կիր. 5 Ապր. — ԾԱՂԿԱԶԱՐԴ Տօն Այլակերպութեան Տեառն։ Օրուան Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Դռնբացէք» Հանդիսութիւնը, որ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս., որ պարագայութեամբ ուղարկուած կարգաւ Ս. Եղիշէ Վրդ. ի Այլակերպութեան ձառը։

● Բշ. 6 Ապր. — Յիշատակ Մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. քարոզեց էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Մանուկ. Ապա Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. նախագահեց հոգե-հանգստեան կարգերուն, նախ Տաճարէն ներս, ապա գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին մօտ, և հուժկուրներ ի վեր կրթութեան Հայ. Ժամ-Թաղի գերեզմանատներուն մէջ։

● Ուր. 10 Ապր. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

● Եր. 11 Ապր. — Ս. Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. քարոզեց էր Հոգշ. Տ. Արշակ Աբղ. Խաչատուրեան։

● Կիր. 12 Ապր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ(*)։ Քարոզեց էր Հոգշ. Տ. Գուրգէն Վրդ. Սահակեան։ Ապա կատարուեցաւ «Թափօր-օրհնէնք» արարողութիւնը, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի։

● Բշ. 13 Ապր. Այսօր սկսան Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը կանխող ամէնօրեայ Հանդիսաւոր Ս. Պատարագները՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

● Կիր. 19 Ապր. — Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կուսի գերեզմանին վրայ. քարոզեց էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Մանուկ։

● Ուր. 24 Ապր. — Նախատօնակին ի Ս. Էջմիածին Նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

● Եր. 25 Ապր. — Տօն Եղակայի Ս. Էջմիածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ. քարոզեց էր Հոգշ. Տ. Արշակ Աբղ. Խաչատուրեան։

Կէսօրէ վերջ Միաբանութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, ընթացակարգերով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը ու Հրաշափառով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման Մեծամասնութեան Նախատօնակը՝ Ն. Ամենապատուութեան։

— Երեկոյեան, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան եկեղեցական և Հսկման կարգեր, և ապա՝ առաւօտեան ժամերգութիւն, Հանդիսապետ էր Գերշ. Տ. Նորայր Եպս.։ Ու գիշերին, Միաբանութիւն և ներկայ հաւատացեալներ վերադարձան Մայրավանք։

● Կիր. 26 Ապր. — ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ընթացակարգերով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը ու Հրաշափառով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ օրուայ պատշաճի քարոզ մը խօսեցաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընթացան ունենալով «Երանի՜ է որդւոյն» որ կրեցին զքեզ (Ղկ. ժԱ. 27)։ Է ավետարանին՝ որ կրեցին գրքեր Ս. Պատարագէն ետք, Գերշ. Պատարագիչ Արքեպս. Ս. Պատարագէն ետք, Գերշ. Պատարագիչ կատարեց նախագահեց «Դռնբացէք»ին։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան նախ՝ «Դռնբացէք», ապա՝ երեկոյեան ժամերգութիւն և Նախատօնակ։ Հանդիսապետ էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

● Բշ. 27 Ապր. — Յիշատակ Մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. քարոզեց էր Հոգշ. Տ. Գուրգէն Վրդ. Սահակեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ Մայր Տաճարին մէջ, գաւիթը՝ Երանաշնորհ Կիւրեղ Պատրիարք Հօր շիրմին Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարք Հօր շիրմին վրայ, և հուժկուրներ ի վեր կրթութեան Հայ. Ժամ-Թաղի գերեզմանատներուն մէջ։ Հանգստեան արարողութեան գերեզմանատներուն մէջ։ Հոգեհանգստեան արարողութիւնները Գերշ. Տ. Նորայր Եպս.ի նախագահութեամբ։

● Եր. 1 Մայիս — Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի։ Մայր Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին վրայ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Քարոզեց էր Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Զօրաբեան։

(*) Ս. Յարութեան Տաճարի մեր սեփականութեան մէջ, կատարուած խորանութեանց պատճառաւ, անոնց մատուցուելիք Ս. Պատարագները և այլ արարողութիւնները կը կատարուին Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։

digitised by A.R.A.R.@

● Կիր. 2 Սեպտ. — Ը. օր Վերափ.: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։

● Բշ. 3 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Դշ. 4 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմի գերեզմանին վրայ։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաչէ Աբղ. Իգնատիոսեան։

● Շբ. 8 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

● Կիր. 9 Սեպտ. — Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաղարշ Աբղ. Խաչատուրեան։ Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

● Կիր. 16 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

● Եշ. 20 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Ուր. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի. Առաւօտուն, Գերշ. Տ. Նորայր Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և առօր պատշաճի քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Կիր. 23 Սեպտ. — Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Սանտրունի։

● Շբ. 29 Սեպտ. — Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Խաչվերացի մեծահանդէս Նախատօնակին, որմէ ետք Ս. Խաչափայտի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան։

— Գիշերակիզբին, Գերշ. Տ. Նորայր Եպս. նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Ննջեցելոց» և Հսկման կարգերուն։

● Կիր. 30 Սեպտ. — ՕՐՆ ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և քարոզեց, բնաբան ունենալով «Զի՛ բանն խաչին կորուսելոցն յիմարութիւն է ...» (Ա. Կորն. Ա. 18)։ Քարոզը և Ս. Պատարագէն մաս մը ձայնասփռուեցան Յորդանանի ռատիոկայանէն։ Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս և ազգիս բարերարներ Մելգոնեան հարազատաց հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ը։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։ Ներկայ էր մեծ թիւով ժողովուրդ։

● Բշ. 1 Հոկտ. — Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Զաքարեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի գաւիթը և յետոյ Զամ-Թաղի գերեզմանավայրին մէջ։ Այս արարողութեանց կը նախագահէր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Եշ. 11 Օգոս. — Ն. Վսհ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան 10րդ տարեդարձի առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ իր, Ս. Յակոբեանց Միաբանութեան և Յորդանանի Հայ Համայնքին անունով շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամմանի Արքունիք։

● Բշ. 20 Օգոս. — Ամերիկեան Նոր Ընդհ. Հիւպատոս Գր. Համիլթըն իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Դշ. 22 Օգոս. — Այնճարի Հոգևոր Հովիւ Արժ. Տ. Վահան Քհնյ. Քէնտիրճեան հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ շաբաթ մը ետք։

● Բշ. 27 Օգոս. — Անգլիական Նոր Ընդհ. Հիւպատոսը իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Ուր. 31 Օգոս. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ Վարդապետեան ու Տիար Կարապետ Հինդլեանը, փոխադարձ այցելութեան գնաց Անգլիական Նոր Ընդհ. Հիւպատոսին։

● Կիր. 2 Սեպտ. — Կիպրոսէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Սանտրունի հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Սեպտ. 26ին։

● Բշ. 3 Սեպտ. — Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովոյ Հոգշ. անդամոց, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Երկրորդ. Վարժարանի 1962–63 դպրոցական տարեշրջանին։

● Շբ. 15 Սեպտ. — Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան մեկնեցաւ Պէյրութ՝ դարմանումի։ Իր տեղ Ս. Աթոռոյս Աւագ Թարգման նշանակուեցաւ Հոգշ. Տ. Դաւիթ Վրդ. Սահակեան։

● Գշ. 25 Սեպտ. — Կիպրոսէն Արժ. Տ. Սմբատ Քհնյ. Տէր Միքայէլեան հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ շաբաթ մը ետք։

● Շբ. 29 Սեպտ. — Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղճանեան Պատ. Տնօրէն Ժողովի որոշմամբ նշանակուած ըլլալով Հոգևոր Հովիւ Ամմանի և շրջակայից, մեկնեցաւ իր նոր պաշտօնավայրը՝ իր տեղ Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսուչ նշանակուեցաւ Ամմանի նախկին Հովիւ Հոգշ. Տ. Վրթանէս Աբղ. Գալայճեանը։

digitised by A.R.A.R.@